

կ'ուղեցնէր, մղելով դէպի հանդիպակաց ափը, դէպի նոր հորիզոններ: Մովսիսն այս ճամբորդութիւնը հաճելի է՝ եթէ կասալից ծովը ենթակայ չըլլայ շարունակական փոթորիկներու: Սակայն կ'երեւի թէ Ապետիքեանք անվտանգ կատարեցին ճամբուն այս մասը, որովհետեւ իրենց առջեւ չուտով երեւցաւ Վոլկայի ճախճախոտ գետաբերանին վրայ շինուած Նա-կայի-Թաթարներու երբեմնի մայրաքաղաքը՝ Աստրախան: Քաղաքը տափարակ էր, պարիսպով չընկալուած ու միշտ մեծ շարժում կար մէջը, որովհետեւ ուսու-պարսիկ առեւտրական փոխանակութիւններու կեդրոնն էր: Քաղաքին մէջ տեղը կը բարձրանար Ձար Իւանի կառուցած դղեակը: Այն ժամանակները քաղաքը տակաւին լի էր թաթարներով, որոնք մեծ յարգանքով կը խնամէին իրենց պետերու դամբանները, յուշարձաններն ու ազգային սովորութիւնները: Յաճախ քրիստոնէական սովորութեան նման, թաթարական դերեզմաններու առջեւ կը տեսնուէին վառ ճրագներ ու մոմեր: Ապետիքեանները հանդէսէ վերջ նաւէն ելան ու քանի մը օր քաղաքը անցուցին, սպասելով Ռուս Ձարի հովանաւորող հրովարտակին, որուն կանխաւ իմացուցած էին իրենց գալուստը:

Վերջապէս Մոսկովայի սուրհանդակը հասաւ, որ ինքզինքը ներկայացուց պաշտօնական արարողութիւններով, եւ հանդիսաւոր կերպով հրաւիրեց երկու պատգամաւորները Ձարի կողմէն որ հաճին ոտք դնել իրենց տէրութեան հողին վրայ, ու ինքզինքնին նկատեն իրենց հայրենիքին մէջ. միաժամանակ կը խոստանար անոնց պետական ամէն օժանդակութիւն եւ հովանաւորութիւն:

Ապետիք ու իր ընկերները անմիջապէս

ճամբայ ելան, սկսելով իրենց ուղեւորութեան ամէնէն վտանգաւոր ու տաժանելի մասերէն մէկը: Թէեւ Եւրոպական-Ռուսիոյ մէջ կը ճամբորդէին, սակայն ասիական քան միայն կը նշանակէր թէ այդ երկրամասը Ձարի գերիշխանութեան տակն էր, բայց իսկական տէրերը տակաւին թաթարներն էին. աւելի ճիշտ՝ այն թաթար խումբերը որ իրենց պետին առաջնորդութեամբ թափառաշրջիկ կ'ապրէին, զբաղելով որսորդութեամբ, ձկնորսութեամբ եւ շատ անգամ ալ աւաղակութեամբ:

Նոյն տարին Վոլկան սովորականէն կանուխ սառած էր, այնպէս որ երկու դեսպանները եւ իրենց հետեւորդները ո'չ թէ նաւով, այլ բազմաթիւ փոքրիկ սահնակներով ստիպուեցան շարունակել իրենց ճամբան:

Դէպի Եւրոպայի մայրաքաղաքները տանող ճամբան Աստրախանէն հիւսիս կ'երկարէր Վոլկայի եզերքը: Բազդատմամբ ամէնէն անվտանգ ու բնակուած մասն էր ասիկա: Ձարին պաշտօնեաներն ալ ընդհանրապէս այս ճամբան կ'ընէին. ուստի Ապետիքեաններն ալ այս ուղին ընտրեցին:

Ճամբորդութիւնը ամենեւին հաճելի ընդթ չունէր: Թէեւ անոնք Եւրոպայի մէջ էին, սակայն պատկերը իրենց շուրջ եւ բարքերը բոլորովին ասիական կը մնային: Միշտ պատրաստ պէտք էին ըլլալ թաթարներու յանկարծական յարձակումներուն դիմադրելու համար. իսկ իրենց առաջնորդ ու ընկերացող զինեալ գունդը պիտի չկարենար դիմադրաւել թաթար մեծկակ խումբի մը:

Ապետիքեանները արագօրէն կը յառաջանային:

Թրգմ. Հ. Ա. Ֆ.

(Շարունակելի)

ՄԱՐԱՇԱՀԱՅ ԲԱՐՔԵՐ

(Շար. տես Բազմ. 1953, թ. 4-5, էջ 83)

Հոգեգալուստն ալ ունի իր ութօրեայ պահքերը, որոնց « Հոգու-պոք » կ'ըսէ ժողովուրդը:

Պահքերու շարքին կարելի է յիշել նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Վարդապետի շաքաթական պահքերը:

Վարդապետը եղանակին ամէնէն շուրթ-թալից տօնն է: Արեւը կըսի կը թափէ ամէն կողմ: Շաքաթ երեկոյ, երբ աստղեր կը ծաղկին երկնքին վրայ, զեփիւռը կ'անցնի մեղմահունչ, զովութիւն սիրունով իր չորս դին: Կ'ըսեն թէ ջուրերը կը յորդին այս գիշեր: Շատեր կը լողնան, երազելով որ ոսկիի փոխուի այդ զով ջուրը: Ուրիշներ՝ կարկաչահոս ակերը կ'երթան ներկայ գտնուելու ջուրի յորդումին:

Կէս գիշերէն յետոյ սակայն, երբ տակաւին խաւար է ամէն կողմ, ընտանիքներ խմորովին թաքսառաքով կ'երթան ուխտի:

Թաքսառաքովը՝ քաղաքին հիւսիս-կողմը, երեք քառորդ ժամ հեռու, բարձր բլուր մըն է, որուն գագաթը Ս. Թադէոս առաքեալին նուիրուած տաճարի մը վեր-լատակները կը գտնուին: Աւանդութիւն մը կ'ըսէ թէ Թադէոս առաքեալը Մարաշէն անցած ատեն այս բլրան վրայ կը գիշերէ եղեր:

Սեպածեւ տաժանելի վերելքէ մը յետոյ, շատեր բոկոտն, ուրիշներ ծունկի վրայ քալելով կը հասնին ուխտավայրը, իրենց հետ մէյմէկ քար բերելով: Այդ քարերով բացօթեայ խորան մը կը շտկուի: Եւ առաւօտեան մթնշաղին, երբ արեւը իր շողակերտ վրձինով զմայլելի տեսարաններ կը նկարէ հորիզոնի մուսլ պատուին վրայ, ժողովուրդը բարեպաշտ

երկիւղածութեամբ ներկայ է աստուածային պատարագին: Խորանի մոմերը կը մաշին քաղցրաթրթիւ բոցերով. քաղցրալուր մեղեդիներու ծփանքը կը հեռանայ համատարած լուսեան մէջ: Ամէնուն սիրտը եւ հոգին, այս դալարագեղ բարձունքին վրայ, աւելի մօտ կը դգայ ինքզինքը Աստուծոյ. ջերմեռանդ շրթունքներ, եռանդալի իրենց իղձերուն կատարումը կը հայցեն Բարձրեակէն: Յաւարտ պատարագին, ամէն ոք իր ուխտը կը կատարէ՝ գառնուկ մը, աքլոր մը, կամ աղանի մը մորթելով: Ամբողջ միտք, հոգ կամ եփած կը բաժնեն քաղաքին աղքատներուն:

Կ'ըսուի թէ ուխտավայրին մէջ, բարեպաշտներէն ոմանք երբեմն խուսկի հոտ կ'առնեն եւ հրեշտակային երգեր կը լսեն:

Եկեղեցական արարողութիւններէն յետոյ ժողովուրդը վար կ'իջնէ, եւ բլուրին ստորոտը, Քառասուն ալ (Գրեզ-կէօզ) կոչուած աղբիւրին շրջակայքը մինչեւ երեկոյ ուրախ օր մը կ'անցընէ:

Չմայլելի է Քառասուն ակերու տեսարանը: Բնութիւնը հոն չուայլած է ամէն գեղեցկութիւն: Ի՞նչ քաղցրաբոյր օդ. ի՞նչ սառնորակ ջուրեր, որոնք հեղասահ կը կարկաչեն, քնարներու պէս անոյշ, բիւրեղներու պէս պայծառ: Ոստախիտ ծառերու շուքին տակ, զմրուխտի պէս կանաչ մարմանդին վրայ, զուարթ ծափեր ու ծիծաղներ կը խառնուին առուակներու մրմունջներուն:

Ձիւրար ջրելու տօնն է այսօր: Տարի-քոտները պարզ արարողութեան մը ձեւով քիչ մը ջուր կը սրսկեն իրարու վրայ եւ բարեմաղթութիւններ կը փոխանակեն իրարու: Ձուր կը սրսկուի նաեւ սենեակ-բարու: Ձուր կը սրսկուի նաեւ սենեակ-

ներու մէջ: Իսկ երիտասարդները, զինուած զոյլերով ու գաւաթներով, կատարեալ ջրամարտ կը մղեն իրարու դէմ: Շատ անգամ մաքուր հագուած տիկիներ եւ օրիորդներ, պաղ ջուրի անակնկալ բաղնիք մը կ'առնեն: Ուրիշներ զերար կը հրեն Քառասուն ակի ջուրերուն մէջ: Ո՞վ կրնայ չափ դնել երիտասարդներու խօլ զուարթութեան:

Թաքսառաքորի արեւմտեան կողմի ստորոտը կը գտնուի Ս. Կատարինէի նուիրուած ակնաղբիւրը, որ ուխտավայր մըն է Ջերմէ տառապող կիներու: Հոն, պաղ ջուրին մէջ երեք անգամ լողնալէ յետոյ, հիւանդը դրամ կը ձգէ ակին մէջ: Յետոյ թուրքեր կու գան ակին մէջէն դրամները դրպանելու:

Հազ ունեցողներու ուխտավայրն է Ս. Թաղէոս առաքեալի քարայրը, որ կը գտնուի քաղաքին արեւելեան կողմը, քսան վայրկեան հեռու բարձր բլուրի մը վրայ:

Ժողովրդական աւանդութիւնը կ'ըսէ թէ Ս. Թաղէոս առաքեալ այդ քարայրի պատին կրթնած է, ու մինչեւ այսօր կը ունակին տեղը կը մնայ: Հազէ տառապողներ հոս կու գան, պատէն հող կամ քարի կտոր մը փրցնելով կ'աղօթեն որ իրենց հազը դադրի:

Թուրքերը սեփականացնելով այս վայրը, իրենց «Մէրճիմէք Տէտէ»ին նուիրած են զայն:

Մորթի հիւանդութիւն ունեցողներու համար, թրքական թաղամասին մէջ կայ «Ուլուզ-բունարը» կոչուած ուխտատեղին: Աւանդութեան համաձայն թաղէոս առաքեալը բխեցուցած է այս աղբիւրը: Հիւանդներ, երեք չորեքշաբթի շարունակ կարար կ'երթան հոն լողնալով բուժում գտնելու: Թուրքերը իրենց սեփականացուցեր են նաեւ այս ուխտատեղին:

Վարդափառի յաջորդող մեծագոյն տօնն է Վերափոխումը: Շաբաթական պահքը կը պահուի անթերի: Աւելի ջերմեռանդ-

ներ, երկու շաբաթ կ'երկարեն իրենց պահքը ի պատիւ Աստուածամօր:

Մինչեւ Վերափոխում սովորութիւն է խաղող չուտել: Իսկ այս զոհողութեան չղիմացողները, խաղողը ուտելու են դոնէ առանց զայն լուալու:

Տօնին օրը, պատարագի վերջաւորութեան, տեղի կ'ունենայ աւանդական խաղողօրհնէքը: Ժողովուրդն է որ սակառներով խաղող կը նուիրէ եկեղեցիին: Քահանան խաչով ու Աւետարանով կը կատարէ օրհնութիւնը եւ ժողովուրդին կը բաշխուի մասի նման: Նոյն օրը աղքատներուն մատակարարութեան թիւը անհամար է:

Վերափոխումի յաջորդ օրը, երկուշաբթի, ամէն մարդ իր այգիները կ'երթայ: Հոն չամիչ շինելու եղանակն է: Խաղողի քաղցրահոյ ողկոյցները, ձէթով օծելէ յետոյ, արեւին տակ կը փռեն: Ութ օր արեւակի կիլիչ ճառագայթներն ըմպելով՝ խաղողը կը վերածուի չամիչի: Չամիչը հաւաքելով պարկերու մէջ կը լեցընեն իրերէ ձմեռուան պաշար:

Խաչվերացին սովորութիւն է եղանակին ծաղիկներն օրհնել տալ եկեղեցւոյ մէջ, եւ Ս. Խաչը պճնաղարդել բաղմբեան դաշտին: Խաչվերացի, մանաւանդ զգլխիչ ուսանող: Շատեր կը չորցնեն այս բուրբոնաւէտ բոյսը եւ իրր համեմ կը գործածեն կերակուրներու մէջ:

Խաչվերացէն յետոյ ահա Յիսնակացի պահքերը: Առաջին չորեքշաբթին՝ ուղիւ ապուր կ'ուտէ ամէն ընտանիք: Յիսնակացին մէջ պէտք է սկսիլ կրակ վառել տան մէջ, այլ սպասելու է պահքերու վերջանալուն: Սակայն ով որ Յիսնակացէն ջանալուն: Սակայն ով որ Յիսնակացէն, առաջ սկսած է արդէն վառարան վառել, առաջին օրը պահքերու ընթացքին ալ շարունակելու:

Արտերու մէջ ցորենը ցանուած է արդէն: Ժողովուրդը անձրեւի կը սպասէ: Երբ երկար ատեն անձրեւ չգայ, խումբ

մը մանուկներ, խրտուիլակ մը ձեռքերնին, փողոցէ փողոց կը պտտին կանչելով թուրքերէն:

Չուլա կէլինննէ իստէր,
Պիր ազըքաֆ տուզ իստէր,
Ալլահտաննէ Եալմուր իստէր:

Ու ջուր կը թափեն խրտուիլակի վրէտն: Հետաքրքիրներ փողոց կը թափին տեսնելու համար այս թափօրը՝ որ երթալով կը ստուարանայ նորեկներով:

Նման ցոյցեր ուրիշ օրեր եւս կը կըրկնուին մինչեւ որ անձրեւ լիջէ երկնքէն:

Ահա նաեւ Ս. Յակոբի տօնը: Շաբաթ մը առաջ պահք կը սկսի. մանաւանդ թէ նախընթաց կիրակի երեկոյցն սկսեալ ծոմ կը պահեն մինչեւ չորեքշաբթի: Փոքրիկներն անշուշտ աղատ են այս ծոմապահութեան: Շատեր մինչեւ շաբաթ կ'երկարեն իրենց ծոմը: Ծոմը աւերելու համար եկեղեցի կ'երթան եւ օրհնած ջուր կը խրժեն:

Սովորութիւն է որ փեսացուն հրուշակ, Մարաշի յատուկ դուլսայ եւ «ղարշըն» կոչուած կօշիկ նուիրէ իր նշանածին: Կօշիկը պէտք է պճնուած ըլլայ ոսկեթոյր շրջապատով եւ փայլուն փոքր կոճակներով: Չորեքշաբթին

Ս. Յակոբի պահքերու չորեքշաբթին ուղիւ շինուած ապուր եւ դահինէ հրուշակ պէտք է ուտել: Սոյն հրուշակը տուրքերով իրարու նուէր կը զրկեն բարեկամներ: Պէտք է մոռնալ բանտարկեալներն ու աղքատները. անլի լաւալ եւ կերակուր պէտք է զրկուի անոնց:

Այլեւս օդերը կը ցրտեն: Կը ձիւնէ: Առաջին ձիւնը թոյն է, կ'ըսեն: Երկրորդ անգամ տեղացող ձիւնին մէջ ուղիւ խառնելով կ'ուտեն: Այս ձիւնախառն ուղիւն նշելով կ'ուտեն: Այս ձիւնախառն ուղիւն «Ղարսամպաճ» անունը կու տան մարաշցիները:

Դեկտեմբերի վերջերը իրարու կը յաջորդեն Ս. Պետրոսի, Ս. Պողոսի, Ս. Յովհաննէսի տօները: Շատերու անուան տօնն

է: Տօնակատարը եկեղեցի կ'երթայ առտու մոմ վառելու: Երեկոյեան մաքրուած շրտկուած է իր տունը: Խումբ խումբ բարեկամներ կու գան իր անունը շնորհաւորելու: Հիւրերը իրենց հետ կը բերեն խրճճորի մէջ անցուցած մոմ: Ի՞նչ գեղեցիկ սովորութիւն. մոմով լոյս կը բերեն տունէն ներս, տօնակատարի հոգին լուսաւորելու: Հին ատեն տօնակատարին տարիքին թիւով մոմեր կը բերէին իրեն: Մոմի հետ տեսակ տեսակ պտուղներ կամ անուշեղէն ալ կը նուիրեն անպայման:

Գիշեր մը որոտընդոտ կ'արթննաս. դուրսը թիթեղի, թմբուկի, մարդկային կանչերու ժխոր մը կ'ալեկոծէ ցայգային լուսնիւնը. մերթ ընդ մերթ հրացանի հարուածներ եւս կը լսուին: Լուսնի խաւարում կայ: Թիթեղներու խժալուր աղմուկով ժողովուրդը կը կարծէ փախցնել այդ դեւը, որ լուսնի արծաթ դէմքը ծածկած է իր խաւարակուտ մարմինով: Աւելի հին ատեն սովորութիւն էր նաեւ եկեղեցւոյ զանգակները զարնել. իսկ թուրք մուլաներ մզկիթներէն «էգան» կը կանչէին լուսնի խաւարումը փարատելու համար:

Դեկտեմբերի վերջին օրն է: Հին տարին իր վերջին թախծալի ժպիտը դէմքին՝ կ'անհետի տեղ տալու համար նորին:

Երեկոյեան կրակարանի հուրը կ'արծարծի ոսկեղոյն բոցերով: Անոր շուրջ հաւաքուած են ընտանիքն ու բարեկամներ. մինչեւ կէս գիշեր արթուն են եւ Ամանորին կը սպասեն: Ահա ժամը 12 կը զարնէ: Կը բացուի Ամանորի դուռը: Տաք խօսակցութիւնը պահ մը կը դադրի. լոյսերը կը մարեն ու յոտնկայս կ'աղօթեն, բնդհանրապէս «Հայր մեր» ըսելով կամ երգելով: Ապա իրարու բարեմաղթութիւններ կը փոխանակուին. «Իշնէվիւր տարան վիրէդ (Շնորհաւոր տարին վրադ թող ըլլայ). որուն կը պատասխանուի. «Իվրի քիդ, իվրի սիրակներիդ (քու եւ սիրելիներդ վրայ ալ թող ըլլայ):

Փոքրիկները կը հաւատան թէ ճիշտ կէս
գիշերին Շուէտը (Կաղանդ պապուկը)
պիտի գայ: Արեւը մարը մտնելէ ետք ի-
րարանցում մը կայ տանիքներու վրայ:
10-12 տարեկան տղաներ, խումբ խումբ
տանիքէ տանիք կը պտտին երգելով:

Սայա սայա սարսըդդիմ
Սանտրդըն տիպիկի պերֆիդդիմ,
Վերէնին պիր օլու օլսուն,
Վերմիէնին քըրքիս պիր դըրը օլսուն:

Խմբերգին ձայնը երթալով կը մօտե-
նայ. ահա բուխուրիկին քով հասաւ ման-
կական խումբը: Չուանով դոյլ մը կամ
տոպրակ մը կ'իջեցնեն ծխնելոյզի ծակէն.
ուրիշ տղեկ մը առասանով կապուած կա-
կուղ շողգամ մը կը սահեցնէ վար: Տան
բնակիչները՝ դոյլին կամ տոպրակին մէջ
չամիչ, շաքար, շարոց եւ զանազան միր-
գեր կը լեցնեն, իսկ շողգամի մէջ ալ պը-
ղինձէ դրամ կը խօթեն: Երբեմն տոպրակ-
ները կրակի բոցերէն կ'այրին: Մեծ է տը-
ղոց ուրախութիւնը: Աւելի փոքրիկներ,
քունի չդիմանով անկողին են: Անոնց
բարձերուն տակ՝ ծնողները նուէրներ կը
դետեղեն:

Սովորութիւն է նոր տարիի առաւել-
բրինձ, ցորեն եւ ուրիշ նուէրներ դրել
քահանային տունը եւ անձամբ ներկայա-
նալով երէցիկներին, նոր տարի մաղթել ա-
նոր:

Ծնունդի խթումին՝ ծոմ է ամէն ոք:
Երեկոյեան պատարագին կը հաղորդուին:
Ընթրիքին, քարսանայի ապուր, ձուկ եւ
տապկուած բանջար գտնուելու է սիրոցի
վրայ:

Կէս գիշերէն քիչ յետոյ, եկեղեցին ար-
դէն լի է հաւատացեալներու բազմու-
թեամբ: Յիսուսի ծնունդին տօնն է: Եկե-
ղեցին շքեղօրէն զարդարուած է: Ընդհա-
նուր լուսավառութեան մէջ կը ծփայ
խունկի անուշահոտ չղարչը: Քաղցրալուր

շարականներ կը յափշտակեն ամէնուն
սիրտը:

Իսկ փողոցներու մէջ խումբ խումբ մա-
նուկներ «Աւետիս» երգելով դռնէ դուռ
կը պտտին, նուէրներ ստանալու համար:
Օրուան մէջ իրարու Ծնունդ մաղթելու
կ'երթան բարեկամներ:

Փետրուար 13-ին, կէսօրէ վերջ ամէն
ոք եկեղեցի կը վազէ: Տեառնըդառաջի
նախօրեակն է: Եկեղեցին դարձեալ ողոր-
ուած է մոմերու լոյսով: Գլխաւորապէս
նոր հարսերն են մոմ վառողները: Իսկ նը-
շանուած երիտասարդները զարդարուն մոմ
մը կը վառեն եկեղեցին, իրենց նշանածին
քով: Ժողովուրդը կը հետաքրքրուի գիտ-
նալու համար թէ որո՞ւն մոմը աւելի մեծ
է եւ զարդարուն:

Երեկոյեան ժամերգութենէ յետոյ, հա-
ւատացեալները, մոմերնին վառած եկեղե-
ցիի մոմէն՝ տուն կը փութան իրենց տան
լապտերները այդ լոյսով վառելու հա-
մար. Քրիստոսի լոյսն է որ կը ծաւալի
տունէ տուն:

Ապա բազմութիւնը կը բարձրանայ տա-
նիք «Ալամպը» վառելու: Տանիքին վրայ
արդէն պատրաստ են ցախերը: Եկեղեցիէն
բերուած մոմով կրակ կու տան ցախերուն:
Փայտերը կը փռնեն, բոցերը կը բար-
ձրանան: Ծեր ու երիտասարդ, մանչ ու
աղջիկ երեք անգամ կը ցատկեն բոցալի-
զու կրակի վրայէն, որպէսզի կատարուի
իրենց փափաքը:

Այս երեկոյ եկեղեցի կ'երթան մասնա-
ւորապէս այն կիները, որոնք վերջին քա-
ռասուն օրերուն մէջ զաւակ ունեցած են,
եւ իրենց ու մանուկին վրայ Աւետարան
կարդալ տալով քառասունքէն կ'ելլեն:

Ս. Սարգիսի տօնին շաբաթ մը պահ-
քունելու է, իսկ առաջին երեք օրերը՝ ծոմ:

Պահքի չորեքշաբթին, ոռւպով պատ-
րաստուած դաւիթէ հրուշակ եւ քիչ մը շա-
քարախառն դահին-հաց կ'ուտեն ամէն
տեղ: Պահքերու շրջանին, դռնէ անգամ մը

ռուպով շինուած ապուր եւ անլի հաց ու-
տելու է ամէն ոք:

Շաբաթ՝ Ս. Սարգիս է. շաբեր մատաղ
կ'ընեն եւ զայն ամբողջովին աղքատներուն
եւ բանտարկեալներուն կը բաշխեն: Նոյն
իսկ թուրքեր, եւ մանաւանդ բոշաներ,
այսօր հաւ կամ աքլոր, երբեմն պղինձէ
ամաններ կը նուիրեն եկեղեցիին, ըսելով.
«Պու յըտըր էլլէգիմ տիր» (ասիկա Սուրբ
Սարգիսին է):

Ս. Սարգիսի նախօրեակին, ուրբաթ ե-
րեկոյ, ամանով ալիւր եւ ջուր կը դնեն
սենեակին մէջ: Կէս գիշերին, Ս. Սարգիս
կու գայ, կ'ըսեն. անոր ձին ջուրէն կը
խմէ, եւ ալիւրին վրայ կը կոխէ օրհնու-
թիւն բերելով տան հացին:

Ս. Սարգիսի տօնին յաջորդող 15 օրերը
բարեկեանքն է: Ամէն կողմ խնձոյքը ան-
պակաս է: Գինի եւ օղի առատօրէն կը
սպառին այդ ցուրտ օրերուն: Մարաշցիին
տան մէջ օղիէն աւելի գինի կը գործած-
ուի: Տուններու մէջ տեղի կ'ունենան երգեր
ու պարեր, գուրսը բլուրներու վրայ՝ զա-
նազան խաղեր:

Վարդանանց տօնին պաշտօնական կե-
րակուրն է՝ հայկական համալսարան
«Հերիսա»ն: Մեծ ամաններու մէջ կը
պատրաստեն այս համեղաճաշակ կերա-
կուրը եւ եօթը տուններու կը բաժնեն:
Աղքատներն ալ կ'ունենան իրենց բաժինը:

Մինչեւ հոս եկեղեցական տօներու կար-
գով ակնարկ մը ձգեցինք մարաշահայ
բարձրերու վրայ: Կ'ուզէինք քանի մը տող
ալ աւելցնել Մարաշի ժողովրդական այն
սովորութիւններու մասին, որոնց նկարա-
չութիւնը չգտանք «Մարաշ կամ Գերմա-
նիկ» ընդարձակ երկասիրութեան մէջ
(տպ. Նիւ Եօրք, 1934):

Կան ընտանիքներ որոնք իրենց նորա-
ծին մանչերու քթին կամ մէկ ականջին
ծին կ'անցընեն. յետոյ երբ 7, 9 կամ 11
օր կ'անցընեն. յետոյ երբ 7, 9 կամ 11
օր կ'անցընեն ըլլայ տղան (պէտք է անդոյդ
թիւ մ'ըլլայ տղուն տարիքը), Ս. Գէորգ

եկեղեցին, կամ Զէյթունի Ս. Աստուածա-
ծին վանքը եւ կամ ալ Երուսաղէմ կը տա-
նին մանուկը եւ քթէն կամ ականջէն օղը
կը հանեն:

Իսկ զալով հարսնիքին, պէտք է մոռ-
նալ հետեւեալ սովորութիւնները: Հարս-
նիքի նախօրեակին, գիշերը փեսան հասա-
րակաց բաղնիք կը տանին: Տաք խօսակ-
ցութիւն մը ծայր կու տայ տաք բաղնիքին
մէջ, որուն պատերն անգամ կը քրտնին
ջերմութենէ: Յետոյ փեսան կը ծնրադրէ
պորտաքարի քով, աւազանի մը մօտ, եւ
իր բարեկամները «Պորհուրդ խորին» կ'եր-
գեն փեսայի գլխուն ջուր թափելով: Ու
բաղնիքի գմբէթը, կարծես յուզուած եկե-
ղեցական քաղցր մեղեդիէն, արցունքի շի-
թեր կը կաթեցնէ բաղնիքի յատակին վը-
րայ:

Յաջորդ օրը, եկեղեցւոյ մէջ, պսակի
արարողութեան միջոց «Պորհուրդ խորին»
երգելով փեսան կը հանուեցնեն, եւ յետոյ
նորէն կը հագուեցնեն. սովորութիւն՝ որ
վերջերս լքուած է: Փեսային քով պնակ
մը կը գտնուի, որուն մէջ դրամ կը նետեն
հրաւիրեալները:

Սովորութիւն է նաեւ, աղջկապարտ օրը,
հարսի տունէն սուրճի սկահակ գողնալ եւ
փեսային տունը բերել: Ամէն անգամ դիւ-
րին բան չէ այս ճարպիկ գողութիւնը, ո-
րովհետեւ աղջկան հայրը ուշադրութեամբ
կը հսկէ, որ չըլլայ թէ սուրճի սկահակը
գողցուելով՝ իր տան բախտն ալ, որուն
խորհրդանիշն է սկահակը, փեսային տու-
նը փոխադրուի:

Հուսկ կ'արժէ յիշատակել նաեւ շաբաթ
երեկոյները, ննջեցեալներու համար խունկ
ծխելով աղօթելու սովորութիւնը: Գեր-
դաստանի մէջ գտնուած մեռելներու թի-
ւով «Հայր մեր» կ'ըսեն, ու կրակի վրայ
խունկ կը դնեն: Խունկին նրբահիւս ծու-
խը պաղատանքի նման կը բարձրանայ առ
Աստուած, յաւիտեական հանգիստ խըն-
դրելու ննջեցեալ հոգիներու համար:



